ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/10146 «30» 05 2019թ.

«ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

ք. Երևան, Հալաբյան 59

Հարգելի պարոն Կիրակոսյան

Երևանի քաղաքապետարանի և «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 28.03.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-5» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար:

Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից ներկայացված 23.04.2019 թ. թիվ 35/232 գրությունը, 23.04.2019 թ կնքված հ. 1 համաձայնագրով միջոցառման իրականացման ժամկետը երկարաձգել է մինչև մայիսի 15-ը: Պատասխանատու ստորաբաժանման կողմից բազմիցս բանավոր և էլ. փոստի միջոցով տեղեկացվել է Ընկերության ներկայացուցչին պայմանագրով և համաձայնագրով նախատեսված ժամկետներում տեխնիկական բնութագրում նշված ծառայությունները պատշաճ և ամբողջական մատուցելու վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից մայիսի 15-ին ներկայացվել է սցենարի գրավոր տարբերակներ, այնինչ նշված ժամկետում նյութը պետք է լիներ հոլովակների տեսքով, պատասխանատու ստորաբաժանման հետ համաձայնացված և պետք է նշված լիներ տարածման միջոցները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի (Պայմանագրի չկատարված մասի՝ **964000** (ինը հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ գումարի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 1.4 կետի՝ տուժանքի մասին համաձայնագիրը կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարը գանձելու նպատակով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Է. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Կատարող՝ Ի. Եղիազարյան
011 514-375